ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

ՃԱՂՈՑ-ԳԻՐՔ.

Հնագոյն ընտիր ընտիր ձեռագիր Աստուածաշունչներէն և Հաշոցներէն կարի զգուշութեամբ ուղղագրուած՝ Մայր Աթոռոյս տպարանէն լոյս տեսաւ այս Հաշոց-գիրքը, որոյ նա և նոր տառից և յստակ տպագրութեան գեղեցկութեան՝ անշուշտ եմք թէ ամեն ոք կհաւանի և կը վկայէ:

Մեր Եկեղեցւոյ Պաշտօնէից դիւրութեան համար՝ Հաշոցի մէջ իւրաքանչիւր աւուր տօնից և հանդիսից հրահանգաց շատերուն մէջ բաւական պարզ բացատրուած խրատներ և հրահանգներ յաւելացած են, ինչպէս ճառերն ևս ձեռագիր ճառընտրաց համաձայն սրբագրուած:

ԳԱՍԱԳԻՐՔ

ՐԱՂԴԱՏԱԿԱՆ ԵՐԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ասիայի, Եփրիկէի, Ամերիկայի և Աւստրալիայի Բնական, Տոհմագրական և Քաղաքական Նկարագրութեան և բաղդատութեան այս դասագիրք՝ յառաջադէմ վարժարանաց համար մեծ կարևորութիւն ունէր, զոր Ս. Պ. բուրգի մերազնեայ ուսանողք աշխատասիրեցին և լրացուցին, և այսպիսի մի դասագիրք առաջին անգամ է որ մեր ազգի մէջ ի լոյս կընծայուի Մայր Աթոռոյս տպարանէն:

Լեզուն և ոճն ըստ բաւականին ընտիր, և դիւրըմբռնելի եղանակներ գործածած է:

Բաց ի ուսանողաց՝ ընթերցասէր ազգայնոց համար ևս հետաքրքրական և ախորժելի մի գիրք է:

Գինն է 4 ռուբլի: